ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«31» ..03..... 2020թ. N 434-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԻ/ԼԻԶԻՆԳԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ/ՀԱՄԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 356-Լ որոշման հավելվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հաստատել «Գյուղատնտեսական կոոպերատիվներին տրամադրվող վարկի/լիզինգի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրերի համաֆինանսավորման/համապարտության գործընթացի համար նախատեսված հավաստագրման կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ա. Խոջոյանին:

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի
2020 թվականի մարտի 31-ի թիվ 434-Ա հրամանի

ԿԱՐԳ

Գյուղատնտեսական կոոպերատիվներին տրամադրվող վարկի/լիզինգի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրերի համաֆինանսավորման/համապարտության գործընթացի համար նախատեսված հավաստագրման

1. Սույն կարգով կանոնակարգվում է գյուղատնտեսական կոոպերատիվներին (այսուհետ՝ Կոոպերատիվ) տրամադրվող վարկի/լիզինգի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրերի համաֆինանսավորման/համապարտության գործընթացին մասնակցելու համար նախապայման հանդիսացող հավաստագրի (այսուհետ՝ Հավաստագիր) տրամադրման գործընթացը:
2. Հավաստագիրը տրամադրվում է Կոոպերատիվի նախագահին՝ այդ նպատակով կազմակերպվող դասընթացին մասնակցության արդյունքում:
3. Դասընթացներին մասնակցելու համար Կոոպերատիվի նախագահը ՀՀ էկոնոմիկայի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) է ներկայացնում դիմում (էլեկտրոնային եղանակով):
4. Դասընթացը կազմակերպվում է ոչ ուշ, քան դրան մասնակցության դիմումի ներկայացման օրվանից 30 օրվա ընթացքում: Դրա մեկնարկի ամսաթվի վերաբերյալ Կոոպերատիվի նախագահը ծանուցվում է ոչ ուշ, քան դասընթացի մեկնարկից 5 օր առաջ:
5. Հավաստագրման նպատակով կազմակերպվող դասընթացի առավելագույն տևողությունը 5 աշխատանքային օր է:
6. Հավաստագիր ստանում են դասընթացի ծրագրին համապատասխան կազմված քննության արդյունքում բավարար գնահատված մասնակցիները:
7. Հավաստագրման դասընթացի ծրագիրը մշակում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանը (այսուհետ՝ Համալսարան)՝ Նախարարության հետ համատեղ:

8. Դասընթացին մասնակցության վճարը կատարում է Նախարարությունը: Վճարի չափը որոշվում է Նախարարության և Համալսարանի միջև կնքվող պայմանագրով:
9. Հավաստագիրը տրվում է 24 ամիս ժամկետով: